

ԶԱՐԵՆԷ ՈՐԲՈՒՆՈՒ ԳՐԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ

Թ. Ն. ԱՐԵՎՍԵՆՅԱՆ

Զարեհ Որբունին (1902—1980 թթ.) ուխտագրայ դրականության տա-
ղանդավոր ներկայացուցիչները է, որի ստեղծագործությունը, ըմբռնա-
բար, քիչ է ծանոթ հայ ընթերցողին:

Որբունի գործունեությունը միջուկում ունի է իրեն բնաշունչը: «Անի»,
«Անահիտ» հանդեսներում լույս տեսած բանաստեղծությունները բավականին
թույլ էին և էրազմադրերն չէին արժանանում լուրջ ուշադրության: Ինքը՝
հեղինակը, հետագայում դրանց մասին խոսում է ոչ թե՛ գեղարվեստական
արժեքավոր նյութի տեսանկյունից, այլ հիմնում է իրեն գրական-պատմական
փաստ: Ժամանակին դրանք քննադատվել են՝ դասվելով սյուրռեալիստական
ու գեղարվեստական գործերի սահմաններից: Դրանք են՝ «Իմ ուսանավոր-
ներս», «Բացատրում է Որբունին», «Հողիկան պետքը մը շունի շղակա՛ն արդյունք
էին»¹, Հեղինակն այս ժանրում մեծ հավանություններ չի ունեցել, քանո՞ր
դիտակցել է «այդ նամբուն մեջ իր տկարություններու առաջադրելիության»²
իրողությունը:

Ամեն մի գրողի ստեղծագործական գործունեություն սկսվում է գրական
ազդեցություններով: Ղևերինս պետք է ունենա ոչ թե շրջադժային, դժպի փա-
կառու, առողջ ընթացք, այլ պետք է դրսևորվի որպես ազդված և իր անձ-
նականը դարձրած աշխարհադարձացման արտահայտություն: Որբունին
նույնպես զերծ չի մնացել վերոհիշյալից, բայց կարողացել է հնարավորին
չափ խուսափել իր ներքին աշխարհի հետ շոշափման: Եղբեր չունեցող ար-
հեստական, սաքայի ազդեցություններից: Ասել է թե՛ նա՝ մինչև ուղնուծը
յուրացրել, սեփական աշխարհայացքի, գրական ձիրքի ու ոճի պրիզմայով է
ունցիպացրել այդ ամենը:

Որբունու սկզբնական ստեղծագործական փորձերում զգալի էր սյուր-
ռեալիստական հոսանքի և սիմվոլիզմի ազդեցությունը:

XX դ. առաջին քառորդին իրենց շուրջը համախոհների մեծ բանակ հա-
վաքած սյուրռեալիստական հոսանքի ներկայացուցիչները գեղարվեստական
մտածողության ձևի հեղաշրջման կոչերում խախտում էին բանաստեղծական
արվեստի նախկին կանոններն ու սկզբունքները՝ մեծ տեղ տալով ենթագի-
տակական մղումներին և գրողի անհատական կարողություններին:

Այս և նորաստեղծ մյուս հոսանքների ազդեցությունը Որբունու ստեղ-
ծագործություններում կապված է ստեղծագործության մատուցման ձևի հե-
ղինակային որոնումների հետ: Խոսքը վերաբերում է 1930—31 թթ. «Մենք»
հանդեսին աշխատակցելու տարիներին: Այս հանդեսը համախմբել էր երի-
տասարդ սերնդի մի քանի տաղանդավոր (նաև ինքնագոհ) ներկայացուցիչ-
ներին, որոնց նպատակն էր հաղթահարել անսովոր գոյավիճակի արդյունք
դրական մի շարք դժվարություններ, որտեղ առանձնահատուկ կարևորություն
էր ներկայացնում ձևաբովանդակային նոր կառուցիչի հայտնագործման խոն-
դիրը: Որբունին ևս նման փնտրտուքների մեջ էր, և դրանք հաճախ հանդեց-
նում էին տարահոսանք դպրոցների խաչաձևման:

1 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Արշակ
Չոպանյանի ֆոնդ, թիվ 5669/1—5711/1, 28(4)1930:

2 Նույն տեղում, 30(10)1930:

Նվ աշխուհանդերձ, նա իրապաշտ էր և կյանքի երևույթները պատկերում էր. այդ ուղղության հիմնական սկզբունքների հետևություններ: «Ծն,—ասում էր նա,—իրապաշտ մարդ մըն եմ: Կուգեմ կյանքը տալ այնպես՝ ինչպես որ է»³, «Կյանքն ինչպես որ է» սկզբունքը որդեգրելով՝ Որբունին ինքնավստահորեն իր հայտն էր ներկայացնում հայ ռեալիստական արձակի երկարամյա պատմությանը:

Որբունու ստեղծագործության վրա անժխտելի էր առավելապես Ֆրանսիայի և Ֆրանսիայի գրող Մ. Պրուստի ազդեցությունը, որի ստեղծագործության բովանդակային կառույցում հանդես եկող ակամա հիշողության երևույթը նա (սկզբում անհաշող) օգտագործում է որպես «ռելիֆ»⁴, վեպի կառուցման եղանակ, ձև, տեխնիկական միջոց: Պատմվածքների առաջին ժողովածուի հրատարակումից հետո (1939 թ.) հեղինակը հայտնվում է ստեղծագործական փակուղու առաջ: Տքնաչան որոնումները ցանկալի արդյունք չէին տալիս: Նա դադարում է գրել և վերսկսում է աշխատանքը միայն այն ժամանակ, երբ վերջնականապես թափանցում է Մ. Պրուստի ստեղծագործական գաղտնարանը, արդյունքում՝ հայտնաբերելով նաև իրենը, որը, գրողի խոստովանությունով, նոր աշխարհ էր բացում իր առջև և օգնում վերագտնել կորցրածը: «Կյանքիս մեծագույն ցնցումը ապրեի եմ՝ ընելով Փրուստի «գլուխը»,—ասում էր Որբունին:—Անշուշտ, հետո ամեն բան պիտի ընեի՝ իրմե հեռանալու համար. ամբողջ կարելիս: Զղառնալու համար անոր կապկումը»⁵:

Իր վրա կրելով և՛ Մ. Պրուստի, և՛ բոլոր այն հեղինակների քիչ թե շատ ազդեցությունները, որոնց ընթերցել էր ժամանակին, Որբունին կարելի էր չափ հեռու էր մնում կուլյուր նմանակումներից, քանզի ազնվորեն էր ծառայում արվեստին և իր ժողովրդին:

Դրա անհերքելի ապացույցն էր նրա առաջին ծավալուն ու լուրջ աշխատանքը՝ «Փորձը» վեպը: Այն հրատարակվել է 1928 թ., Մարտիում: Վեպը շուրջ մասից բաղկացած «Հալածվածները» վիպաշարի առաջին մասն էր: Վերնադիրն արդեն իսկ հուշում էր, թե ովքե՞ր պետք է լինեին վիպաշարի հերոսները, և ո՞ւմ անունից պետք է խոսեր հեղինակը:

Վեպը Որբունու գրական աշխարհ մտնելու սկզբնական փորձն էր, ուստի և անմասն էր ստեղծագործական մուտքի հետ կապված սայթաքումներից: «Փորձի» արժանիքներն ու թերությունները ճիշտ միկրաբանելու համար անհրաժեշտ է խորհում լինել ստեղծման ժամանակի ու պայմանների մեջ: Մեր դարի 20-ական թվականները ծայրահեղ դժվար անցկացրեց ողջ սփյուռքը: «Առաջին տարիներուն՝ այսինքն մինչև 1930,—գրում է Ֆրանսուազայ ճանաչված գրականագետ Գրիգոր Պրլյուսյանը,—սփյուռքը ըլլալ կը նշանակե տրնտեսական ամբողջական քայքայում, հալածվածի հոգեբանություն («որբություն և զրկանք»), պատկանելության տագնապ»⁶: Կորցրած հայրենիքն ու նոր կենսաձևը, հարազատ-օտարի անընդմեջ պայքարը շատերին դարձրեց հոռետես, իսկ շատերին էլ օտարացրեց: Ապագայի նկատմամբ անորոշությունը, հերկայի անմխիթար վիճակն ուղղակիորեն ազդեցին նոր ձևավորվող գրականության վրա: 1915 թ. հետո սփյուռքում ստեղծվեց մի գրականություն, որի մեջ իշխելու հավակնությամբ տեղ էին գտնում աննպատակ ու հոռետես ապրումների անարվեստ պոռթկումներ: Ծաղկեցրան այդ մտածումների մեջ կար ամեն ինչ. և՛ լաց, և՛ ողբ, երբեմն նաև աղոտ հույս, բայց շատ գործեր գուրկ էին ճշմարիտ արվեստի լույսից: Սեփական զոլավիճակի վերաբերյալ մշուշոտ, շատ անգամ նաև ծայրահեղաբանական պատկերացումներ, որոնք, ինչ խոսք, անհիմն չէին, քիչ բան կարող էին տալ բարոյական ու տնտեսական օգնության կարոտ սփյուռքի հայությունը: Հարկավոր էր տալ նոր րա-

³ Բադին, Բեյրութ, 1980, № 10, էջ 53:

⁴ Նույն տեղում, էջ 63:

⁵ Ազգակ, Բեյրութ, 22. XII. 1980:

⁶ Գ. Ր. Պրլյուսյան, Տրամ, Բեյրութ, 1980, էջ 321:

ղաքակրթության պայմաններում նրա ապրելակերպի իրական ու սթափ գնահատումը՝ բոլոր դեպքերում լինելով լավատես կամ այդպիսին լինելու հիմնարար հույսեր նախանշել, խոսքը պարզունակ լավատեսության մասին չէ, այլ այն մասին, որ պարտադրված նոր պայմանների անխուսափելիությունը հասկանալով, գրողը մտահասու պետք է լինի՝ նույն այդ պայմաններում ծավալվող գոյության անզիշում պայքարում մատնանշելու կամ հուշելու փրկության ուղիներ: Իհարկե, գրողը մարգարե չէ և պարտավոր էլ չէ անպայման ելք կանխորոշել, բայց որոշակի ժայռահեղ իրադրություններում որակապես այն փոխելու կամ պարզապես ինքն իրեն հաստատելու անհրաժեշտությունը առավել կարևորվում է գրականության գործնական ներգործության հնարավորությունը: Շահնուրն իր «Նահանջը առանց երգի» վեպով ոչ մի ճանապարհ չույց չտվեց, բայց ինքնավերլուծման առաջին քայլով գործելու շեփոր հնչեցրեց:

Համեմատաբար պակաս, սակայն նկատելի ազդեցություն ունեցավ նաև Որբունու «Փորձը» վեպը:

Այս վեպին անդրադառնալիս՝ քննադատները միշտ էլ ղուգահեռներ են անցկացրել Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» և Հր. Զարդարյանի «Մեր կյանքը» վեպերի միջև: Եվ դա պատահական չէր, քանի որ այդ երեք հեղինակներն էլ պատկանում էին «Նահանջի գրականություն» կոչված թեմատիկ ուղղությանը և գեղարվեստական տարբեր միջոցներով ու ստեղծագործական հնարավորություններով պատկերում էին ուժացման սպառնացող վտանգն իր սպասելի և անսպասելի հետևանքներով: Ի տարբերություն մյուսների՝ Որբունու դործում այս խնդիրն ավելի շատ և ավելի շուտ վերաբերում էր մարդկային հոգուն, քան հայ մարդուն, թեև հերոսն ինքը հայ էր: Նրա Նահանջը Նահանջ էր ընդհանրապես մարդկային, նաև ազգային ոգու լավագույն արժեքներից: Այս վերջինը, սակայն, վեպում ներկայանում էր իբրև հավելադրում կամ էլ ենթատեքստ զխավոր նպատակադրվածությանը, որն էր՝ տրեստեսապես թույլ և հասարակության կողմից «հալածված» մարդու ճակատագիրը կապիտալիստական աշխարհում:

Ի տարբերություն Շահնուրի, որը շեշտը դնում էր «միսին շփումն առաջացող սպիտակ ջարդին վրա», Որբունին խնդրո առարկա էր դարձնում «հացի շփումը»⁷, այսինքն՝ նրա ստեղծագործության մեջ արժեքավորվում էին սոցիալ-տնտեսական հարաբերությունները, որոնք ի զորու էին խորությամբ ու լայնությամբ ներկայացնելու սփյուռքահայ կյանքը շարժման մեջ դնող ողջ համակարգը:

Այս երկու վեպերի համառոտ, բայց և ուշագրավ առաջին վերլուծությունը պատկանում է Ֆրանսահայ դրական ու հասարակական նշանավոր գործիչ Արշակ Զոպանյանին, որն իրավացիորեն դրանք համարում էր «դրական երկու գործիչ ու անձնագրող տաղանդներու հայտնության ապացույց»: «Նյութական անապահովության արհավիրքը,— գրում է նա,— թշվառության ճնշող, խեղդող, անբանացնող, անբարոյացնող զազրությունը, երբեք մեր մեջ չէին նկարագրված այնպիսի ահավոր գործությամբ մը, հետադարձին զուրկ իրականն ըխած այնպիսի արու և խոր շեշտով մը, ինչպես այս գրքին մեջ»⁸: Ընդհանրապես շեշտում էր նաև նկատելի շատ թերություններ: Եվ դա, առաջին հերթին, վերաբերում էր հերոսի րնտրությանը, որը, ըստ քննադատի, «ապիկար մըն է, որ միշտ ջանքեր մը կ'ընեն իր աշխատանքով իրեններուն նեղուկ հանդիսանալու, բայց միշտ ալ կը ձախողի, մինչև որ կը խրի վերջնական

⁷ Ս արգիս Վահագն, Զարեհ Որբունի և իր «Հալածվածները» (Շիրակ, Բելուրթ, 1974, № 1—2, էջ 71):

⁸ Արշակ Զոպանյան, Անհրկ մը աշխատանքի հայ մասվոր կյանքին վրա (Անահիտ, Փարիզ, 1980, № 6, էջ 108):

քստմանի անկումի մը մեջը՝ Համաձայնելով Չոպանյանի ուշագրավ շատ դիտողությունների հետ՝ հարկ է նշել, որ վերոհիշյալ նկատառումը պարունակում էր կյանքի միակողմանի վերարտադրության խորհուրդ, որի իրագործումն անգամ տաղանդավոր գրչի տակ միշտ էլ դեմ է առնում անհաջող ելքի:

Որբունու հերոսը (հետո պարզվում է անունը՝ Մինաս) տառապում էր նյութական անապահովության ճիրաններում, փորձում հաղթահարել աղքատության սարսափը, բայց, ինչպես պարզվում է, ուժերը չեն բավականացնում, և նա պարտվում է: Բայց չէ՞ որ կյանքն ինքը միայն օրինակելի կերպարների, գործողությունների հանդիսասրահ չէ, և Որբունու հերոսն էլ ամենակարող, նվ հետո, երևի թե անիմաստ է գրողին ուղղություն տալ այս կամ այն հերոսի ընտրության հարցում: Կարևորը կերպարի զարգացման համոզականությունն է, նկարագրված դեպքերի տրամաբանական պատճառաբանվածությունը: Որբունու հերոսը պարտվում է, որովհետև համարձակվել էր մանկ ուժերից վեր պայքարի մեջ, և հեղինակը փորձում է ընդգծել հենց այն պայմանների ու միջավայրի հրեշավորությունը, որի ճնշման տակ մարդկային բարոյականության բարձր արժանիքները հաճախ են ոտնահարվում և դրսևորվում իբրև բացառություններ: Այլ խոսք է, որ վերը նշված գաղափարական խնդրի իրականացման ճանապարհին հեղինակը թույլ էր տվել հոգեբանական մի շարք վրիպումներ, որոնք արդյունք էին ստեղծագործական ու կյանքի փորձի պակասի: Բեմադրիչ Սանդուխտի օգնությանը դիմելու ողջ ծրագիրը, սպանված մարդու հանդեպ ցուցաբերված անմարդկային վերաբերմունքը, մոր մահվան գիշերվա և այլ դեպքեր խիստ արհեստական էին ու դժվարությամբ էին սոսնձվում համատեքստին: Ի տարբերություն Շահնուրի վեպի, որտեղ սփյուռքահայ կյանքը ներկայանում էր բազմակերպար հարուստությամբ, Որբունու վեպը, նյութի առումով, բովանդակում էր շատ ավելի նեղ շրջանակ: Հայ երիտասարդի ճակատագիրը հայրենիքից հեռու: Կյանքի սլատկերը սեղմվում էր մի կերպարում, որն ինքն անգամ վերացական էր և լուսաբանման կարոտ: Վեպն ուներ նաև տառապանքի միանվագ հնչողություն: Իրականության մեջ դա պատճառազուրկ չէր, բայց ստեղծագործական հնարավորությունների ողջ պաշարը նույն երևույթի վրա սպառելով՝ Որբունին վեպը դարձրել էր միօրինակ, երբեմն՝ ձանձրալի:

Ինչևէ, վեպն արժեքազուրկ չէր: Այն շոշափում էր սփյուռքահայ գրականության մեջ դեռևս անմշակ մի նյութ, որում մարդկային կյանքի բոլոր երեվույթները բացատրվում էին տնտեսական կյանքի անմիջական կամ միջնորդավորված ներգործությամբ, և այդ էլ այն ժամանակ, երբ «նոր շրջապատը չէր իսկ «նշմարվեր» տակավին և կը նկատվեր լոկ տարանցիկի կայան»⁹:

Վեպում ներկայացվում են գլխավոր հերոսի կյանքի տխուր դրվագները: Հոր մահից հետո գաղթական ընտանիքի ողջ հոգսն ընկնում է նրա ուսերին: Նյութական անմխիթար դրությունը փոքրիշատե բարվոքելու համար հարկավոր էր աշխատանք գտնել, մինչդեռ այդ նպատակով հերոսի ամենօրյա փնտրտուքները ոչինչ չէին տալիս: Մտային բոլոր կարողությունները կենտրոնացել և գործում էին միայն մեկ ուղղությամբ, իսկ ամեն օր վաղ արթնանալն ու աշխատանք գտնելու հույսով գործարաններ, նավահանգիստներ վազելը դարձել էր բնագդակալ: Պակաս հուսահատիչ չէին նաև ընտանիքի անդամների միջև ստեղծված հարաբերությունները: Ի բնե բարի ու նվիրված անձնավորություն լինելով՝ մայրը չարացել էր, դարձել դաժան ու աններող: Կարիքն այնքան էր սեղմել, հոգեպես ձևախեղել նրան, որ մոռացնել էր տվել անգամ հարազատական, արենակցական կապերը: «Մայրս,— ցավով հայտնում է հերոսը,— կատեր գիս: Աղքատությունն ու անոթությունը այդպես կհրամայեին: Չքավորությունը գատել էր իրարմե մեր այնքան մաքուր ու

⁹ Նույն տեղում, էջ 107:

¹⁰ Շիրակ, 1974, № 1—2, էջ 71:

անբաժանելի սիրով կապված սրտերը, ուր այժմ թշնամանքը կաճեր, կուռ-
ճանար մեր անհաց օրերուն համեմատությամբ¹¹։ Նրա ստորոմսերից հե-
տո նա ներկայանում է բեմադրիչ Սանդուխտի՝ նրա դերասանական կազմի
մեջ ընդունվելու խնդրանքով։ Հուլիսից, սակայն, ի դերև են ելնում, երբ
պարզվում է, որ բեմադրիչն ինքը դրամական օգնության կարոտ է։ Ներ-
շնովել նաև ընկերոջ՝ Ղևոնդի խոստացած աշխատանքի հարցի լուծումը։ Մենք
մյուսին հաջորդած այս ձախողությունները, բնականաբար տիրող սառը մթնո-
լորտը հերոսին աստիճանաբար դարձնում են տնվիջում։ Կեսայ ու մահու գո-
յապայքարում չկործանվելու համար նա որոշում է դիմել մինչ այդ իր հա-
մար անսովոր քայլի՝ կողոպուտի։ Աղաչանքն ու խնդրանքը ոչինչ չէին տա-
լիս, ուրեմն պետք էր գողանալ, պետք էր ուրանալ սննդական նյութներ, ապ-
րել ժամանակի պահանջով՝ անսարքեր ու միայնակ։

Որքանու հերոսի շուրթերից հնչող այս բովանդակությամբ խոսքերը
համընկնում են 1925 թ. իր մտերիմ ընկեր Պետրոս Զարոյանին ուղղված
նամակներից մեկում արտահայտված հետևյալ մտքին. «Իրամը, դրամը,
դրամը... Թո՛ղ գողնան, թո՛ղ կողոպտին, թո՛ղ ամեն միջոցի գիմին դառն
հափշտակելու համար, քանի որ նախ ան է մարդուս երեսին վրա արև ծա-
գեցնողը։ Այս է ընդհանուր օրենքը այս օրվան»։ «Առանց անոր,—նշում է
կում է Որքանին,—ինչու ապրել, երբ առանց անոր մեր առջև ամեն ճամբա
փակ է, արգելված»¹²։ Սա հեղինակ-հերոս կերպարային ամբողջությունների
համընկնման հետաքրքիր փաստ է։ Որքանին չէր ժխտում ինքնակենսագրու-
կան տարրերի առկայությունն իր վեպում, բայց գտնում էր, որ «հոգիներու
պաղտնիքները քիչ-քիչ փորելով կը կազմվի վեպը, որ անհատեն մեկնելով
կը խորանա դեպի հավաքականին արմատները»¹³։

Մասնավորից դեպի ընդհանուրը, անհատից դեպի «հավաքականին ար-
մատները»,—սա էր փորձությունների այն շղթան, որը հաղթահարելով էր
միայն արվեստագետը կանգնում մեծ ճանապարհների խաչմերուկում։

Կյանքի՝ իրար հաջորդող հարվածները հերոսին մոտեցնում են գոյություն
ունեցող սոցիալական անարդարությունը վերացնելու դեռևս աղոտ ու իր հա-
մար էլ մութ գաղափարին, իսկ դրա գիտակցումն արդեն գործնական ուղի-
ների որոնելու խնդրի անհրաժեշտության առջև էր կանգնեցնում։ Մինչ այդ
հերոսը մենակ էր և գոյությունը պահպանելու համար որոշում է շնչով ըն-
դունված բարոյական չափանիշներից։ Կողոպուտի առաջին փորձն անհա-
ջողության է մատնվում։ Սեփական ավելորդության զգացումը աստիճանա-
բար արմատանում է և հուսալքում նրան։ Դրությունից դուրս գալու նպա-
ռակով կրկնում է նախորդ փորձը և ձախողվելով՝ հայտնվում մեկուսարա-
նում։ Այդ ընթացքում, չգիմանալով անողորմ վշտի հարվածներին, կաթվածա-
հար է լինում մայրը։ Նրան հուղարկավորելու համար հերոսը վաճառում է
գրքերը։ Շարունակվող դեպքերն ու հերոսի վարքագիծը գրանցում խիստ
անհամոզիչ են։ Խոսքը ոչ թե իրականության մեջ համանման պատկերի չգո-
յության, այլ այն մասին է, որ դեպքերի տրամաբանական ընթացքն ու հե-
րոսի հոգեկան փոփոխությունների ողջ պատմությունը բացառում են այս-
պիսի շրջադարձային իրավիճակների հնարավորությունը։ Երկու անբարոյա-
կան կանանց հետ կապված պատմությունից հետո հանկարծ հերոսի միտքը
պայծառանում է։ «Ոտքի ելա,—պատմում է նա։—Բռնուցքներս կատաղորեն
լարեցի։ Մորս պատկերը աչքիս առջև եկավ ու արագ անցավ։ Սրճարանը
փշուր-փշուր քանդելու մոլեգին սարսուռը պատեց զիս։ Բայց խնդացող դեմ-
քերը ինձ զինաթափ ըրին։ Ինչքան ողորմելի էի»¹⁴։ Հոգեբանական վերլուծու-

11 Ձ. Որքանի, Փորձը, Մարտի, 1929, էջ 19։

12 ԳԱԲ, Պետրոս Զարոյանի Ֆոնդ, թիվ 51, էջ 24 (21. 3. 1925)։

13 Ձ. Որքանի, Օրագիր, Անի, Բեյրութ, 1954, № 2, էջ 85։

14 Ձ. Որքանի, Փորձը, էջ 139։

մյուսաները հակում ունեցող Որբունին այստեղ ձախողվել է, և պատճառը, ըստ էության, արդեն ասացիք, պլանքի ու ստեղծագործական փորձի պակասն էր. Այս ասվածքովում նրան դեռ շատ աշխատանք էր սպասվում:

Վեպի բովանդակության անշուշտ շարահարանքից ասված պարզորոշ երևում է, որ այս հարուստ է հորեղծություններով, հերոսի գործակալ, նպատակալիս անհաշարակող, մի հասցալանք, որս ընդհանուր առմամբ հատուկ չէ Որբունու գրչին, առավելապես վիպական ժամրի փորձառության մեջ: Վեպի կատույ խոսքերն բաղդարամաների այս առանձնահատկությունը հեղինակը բացատրում է շարադրության հետ ունեցած կապով: «Շարժարկնստի լինելը մեր էր, — պատմում է նա: — Մի ճեղքին կերպարս, մեայուն փախապականի ընդհանրություն, առավել մե քաներայով շարժականկարվածի երևույթը ունի տեալություն: Շարժելում նա որոշ ժամանակ մասնակցել է արվեստի այս տեսակի եկատմանը ունեցած հետաքրքրություններով կաղմակերպված խմբակի աշխատանքներին, և դարձելու էր այս ասպարեղը, ինչպես ինքն է խոստովանում: ունեցել է անմիջական ու անմիջական աղքեցություն վեպի աշխատանքների ձևաամուխ լինելու:

Շարժարկնստին սկզբունքի էրբուման հասուն ու շատ ավելի բարդ սանգծադրություն արդյունքների հանգիստում եսք Որբունու ուշ շրջանի փորձերում (սիրտ առնում, «Անհալվել»), որտեղ այն կնրպարանում է մոտեցման արդյունքին նոր մի որակով:

Գրեկտն աստիճան փորձը գրավել ու պարտավորեցրել էր Որբունուն այնպես, որ նա մտադրվել էր շարունակել «Հալածվածները» շարքը: Տնտեսական վիճակի անկախությունը, սակայն, ստիպում է նրան փոխել ծրագիրը և տառել ընտանիքը պահելու մասին: Մի կտոր հաց վաստակելու նպատակին ծառայող էրբություն ու անընդմեջ թափառումները, մշտական աշխատանք շունենալու հետ կապված դժվարությունները գրեկին թույլ չէին տալիս դադարվել որակյա աշխատանքում: Մամուլի էջերում մեջընդմեջ հրատարակվում էին նրա անտամբլածքները, բայց, ժողովածուի հավաք ու ամբողջական տեսք լույսնալով, չէին արժանանում գրական աշխարհի ուշադրությանը:

Երկար ընդմիջումից հետո, 1939 թ., Փարիզում հրատարակվում է Որբունու «Վարձու սենյակ» վերնագրով պատմվածքների ժողովածուն¹⁶: Այստեղ տեղ էին գտել հիմնականում 1925—1937 թթ. գոված և տարբեր հանդեսներում հրատարակված ինը պատմվածք: Դրանցում հեղինակի ստեղծագործական ընդունակությունները դրսևորվում էին մեկ այլ կարևոր կողմով: Որբունին կարողանում էր ասելիքն ամփոփել ծավալով փոքր գործերում, սեղմ և հակիրճ տողերով երկխոսության մեջ մտնել ընթերցողի հետ:

Աշխարհայացքային առումով գիրքը չէր բերում և ոչ մի նորություն, գողը շարունակում էր նախորդ թեմայի նույնամակարդակ շարադրանքը: Միջոցին, այդ էր պատճառը, որ այստեղ-այնտեղ լսվում էին դրվատանքի միայն կցկտուր խոսքեր: Տարիներ հետո հեղինակը նույնպես խիստ է արտահայտվել այս շրջանի պատմվածքների մասին՝ համարելով դրանք անվարժ գրչի արտահայտություններ: Բանաստեղծ Վ. Բոյաջյանի հետ զրույցներից մեկի ժամանակ այդ առթիվ նա ասում է. «Զեմ ուղեր անոնց վրա խորհել, կ'ամչնամ իսկ անոնցմե, ինչպես երիտասարդության սխալներն»¹⁷: Սեփական ստեղծագործությունների նկատմամբ անաչառ այս վերաբերմունքը Որբունու՝ արվեստում ավելին անելու և կարողանալու ներքին առաջնորդ դրդապատճառներից էր:

Ինչպես նախորդ գրքում, այնպես էլ այստեղ հասարակական կյանքը պայմանավորող հարաբերություններն ունեն սոցիալ-տնտեսական բովանդա-

16 Աղգակ, 22. XII. 1980:

16 Ժողովածուի հրատարակությունը սկսվում է 1939 թ. և ավարտվում 1947 թ.:

17 Զ. Որբունի, Պատմվածքներ, Բեյրութ, 1966, էջ 110:

կություն, և պատմվածքների հերոսների գործողությունները պատճառաբանվում են այս կտրվածքով:

Ժողովաժողովի առաջին պատմվածքը կոչվում է «Հարձու սենյակ»: Հերոսը՝ Տիգրանը, կյանքի գծարին ճառագարն ապառ և սպրտական և ետ քաղաքում ապաստան գտա՝ հայտ է: «Սարգսյանը հրեշտակալի քաղաքում նա ապրում էր ամեն մի անցորդի մեջ հարազատի գեթ սի գոի սաստուրյան փնտրտուքով: Ասհրաթեշտ էր հույս, ապապս, որպեսզի վաղվա ապրումների հոգսից կթափ հոգին շտուկասար, շաղկվեր: Տիգրանս իրա սպրտում հր այս սին հույսով, թե այդ երկիրն ազատության երկիր է, իսկ աշխատասքը՝ սուրբ, ուստի և ոչ ոք չէր կարող բռնանալ աշխատելու իր իրավունքի գես: Աշխատանքը սուրբ է, բայց մարդիկ՝ անսուրբ. սա էր անծանոթ բանվորի նլրակացությունը, և Տիգրանը համամիտ չէր դրան: Կյանքի հանդեպ զգացա՝ առօրինակ վախը վերածել էր նրան հնազանդ կենդանու, և ժպիտն էլ իսկ-որ ասհամարձակ էր, ներողամիտ՝ ժպտարին ժպիտը զորավորն առնա»¹⁸:

Այս պատմվածքը XX դ. բնորոշ սոցիալ-տնտեսական հակասությունների փոքրիկ և անհրաժեշտ խորությունից զուրկ ընդհանրական մի պատկեր է, որում հեղինակի՝ այս ժանրում ունեցած հնարավորությունները դրսևորվում են որոշակիորեն:

Տիգրանի բախտակիցներից է Աշոտ Նշանյանը՝ «Գործազուրկ մը» պատմվածքի հերոսը: Ե՛վ Տիգրանը, և՛ Աշոտ Նշանյանն ամբողջացնում են 20—30-ական թվականների սփյուռքահայ այն սերնդի դեգերումները, որը, ապրած լինելով եղեռնի սարսափը, դժվարանում էր կողմնորոշվել անհարազատ միջավայրում: Լուսինացի նկարչի հետ զրույցի ընթացքում նա մտորում է. «Երբեք, երբեք պիտի չհասկանան անոնք մեր հայու արմատախիլ հոգին: Ինչպե՞ս բացատրել զայն: Ինչպե՞ս ըմբռնել ծառը առանց հողի ու մեր հոգին, որ տրտնջող խշրտոցն է հովերուն նետված չոր տերևին, որ կցավի ու կհծծի ամեն անգամ, որ հովերը փոխեն իրենց ուղղությունը»¹⁹:

Սա հայրենազուրկ մի ամբողջ ժողովրդի բողոքի ու տառապանքի ձայնն էր՝ բարձր, հզոր, ազդու, բայց և անհասկանալի օտարներին:

Այս պատմվածքում ևս, ինչպես և ժողովածուի մյուս գործերում, Որբունին չի կարողացել խուսափել թեմայի պարզունակ սոցիալականացումից:

Ուշագրավ է ժողովածուի «Սև մազերը» վերնագրով պատմվածքը (խոսքը չի վերաբերում գեղարվեստական արժանիքներին): Այս պատմվածքի կապակցությունը է, որ Որբունին առաջին անգամ անդրադառնում է իր ստեղծագործության մեջ առանցքային տեղ զբաղեցնող սեռայնության խնդրին:

1927 թ. Որբունին Ե. Զուբաթին է հանձնում «Լիբ-է-իք» վեպագրքով մի պատմվածք, որն այնուհետև ընկնում է Զ. Ծալյանի ձեռքը: Վերջինս նամակով իր վերաբերմունքն է արտահայտում պատմվածքի մասին և քննադատում նրանում նկատվող «ախտավոր հոգեբանական վիճակները»:

«Մենք,—գրում է նա,—իրավունք չունենինք մեր ախտավարակ հոգեբանության (որը շատ բնական է տվյալ պայմաններուն մեջ) թույնով վարակելու մեր առողջ և դեմքը դեպի կյանքը դարձուցած նոր սերունդը»²⁰:

Որբունին, իհարկե, անպատասխան չի թողնում այս դիտողությունը և պատեհ առիթով շտապում է պատասխանել: Պատմվածքում պատկերածը նա փորձում է ներկայացնել որպես քաղցրի բարոյականության նվիրական հիմքերի խախտում, քանզի, որքան էլ արվեստագետը խուսափի այն պատկերներուց, այնուամենայնիվ, «սեռայնությունը միշտ կը մնա ի զորու»²¹: Որբունին չի կարողանում համոզել Զ. Ծալյանին, և պատմվածքը ժողովածուի մեջ է մտնում «Սև մազերը» վերնագրով, այսինքն՝ «պատմվածքին կեդրոնը տեղա-

18 Զ. Որբունին, Վարձու սենյակ, Փարիզ, 1939, էջ 18:

19 Նույն տեղում, էջ 77:

20 Անդառառ, 1964, № 15, էջ 53:

21 Նույն տեղում:

փոխված էր պորտեն շատ վեր, գլխուն մազերուն վրա, քրրե նիք-նիքին արժանապատվության խորհրդանիշը²²։ Այդ զիջումը Որբունին համարում էր պարտություն, քանզի գտնում էր, որ աստված ի վերուստ է սահմանել մարդու իրավունքները և ջրանցում առանձնահատուկ տեղ շնորհել ֆիզիկական մերձեցման կարևորությանը, իրրե սերնդափոխության հիմք ու նախապայման։

«Սե մազերը» պատմվածքի հերոսը նիք-նիք անունով սեամորթն էր, որը չնչին գումարով աշխատում էր ֆրանսիական հյուրանոցներից մեկում և անկարող էր շահագործման դեմ պայքարելու։ «Երբեմն, սակայն,—գրում է հեղինակը,—խածնում էր։ Խածնելը կրնար ըլլալ իր սեռայնությամբ, այն սեռայնությամբ, որ ընդունված էր իրրե զորավոր հատկություն մը²³։ Սեռային արկածախնդրությունների այս թռչունություն էր նիք-նիքը կարողանում ապրել վերագտնված արժանապատվության միամիտ ու թվացյալ հույսով։ Որբունու հերոսները ներքուստ անսահման բարի են, համակերպվող ու երբեք հանգես չեն գալիս իրրե կյանքի տերեր։ Նրանք միշտ ծառաներն են ժամանակի, կյանքի և իրենց իշխողների։

Ժողովածուի մեջ կան պատմվածքներ, որոնք շունեն որոշակի սյուժե և այս կամ այն հոգեվիճակների արտահայտություններ են։ Մենության տխուր ու ֆիզիկական ցավի պես տանջող զգացման արտահայտություն է «Մենություն» պատմվածքը։ Հոգեկան առանձնությունն ու գրսի աշխարհի հետ շփման բացակայությունը հերոսին ստիպում են անցնել ինքնավերլուծման տառապալիքի ուղին, և նա, իր համար էլ անսպասելի, հանգում է այն եզրակացության, որ սեփական ես-ի որոնումը տանում է ինքնահերքման։

Այս և մնացած պատկեր-պատմվածքներում («Գինովը», «Խխունջը», «Նկարը») Որբունու վարպետությունն արդեն պետք է դրսևորվեր ճիշտ մթնոլորտ ու համապատասխան տրամադրություն ստեղծելու, ներկայացված հոգեվիճակները պատճառաբանելու կարողության մեջ։ Բայց պետք է ասել, որ Որբունու այս և վերը քննարկված շատ պատմվածքներ շունեն բավարար խորություն և ընդհանրացնող ուժ, և հեղինակը երբեմն դեպքերի պարզունակ շարակարգումից այն կողմ, այնուամենայնիվ, չի անցնում։ «Հանուն տառապանքին», «Խխունջը», «Նկարը», ընդհանուր առմամբ նաև «Ապուշը» պատմվածքները հեռու են արվեստի որակյալ գործեր լինելուց։

Ինչևէ, սա ևս գրական փորձառություն էր և դեպի հասուն արժեքների ստեղծման ճանապարհը տանող միջադիր օղակ։

Որբունու գրական մուտքը եղավ անաղմուկ։ Նրա ստեղծագործական գործունեության մեջ առաջին երկու գրքերը դարձան յուրօրինակ փորձաքար՝ սեփական կարողությունների ճանաչման ճանապարհին և խոստումնալից ող նախապատրաստեցին հրատարակվելիք գործերի համար։

НАЧАЛО ЛИТЕРАТУРНОГО ПУТИ ЗАРЕ ВОРБУНИ

Р. Б. АРИСТАКЕСЯН

Резюме

Заре Ворбуни—талантливый представитель диаспоры 60—70-х годов. Его первый роман «Опыт» был опубликован в 1929 году, в Марселе. Этот роман входит в четырехтомную книгу «Гонимые».

Основная линия романа—это история главного героя Минаса. По существу этот образ обобщает жизнь тех армян, которые нашли приют на чужбине. Они не только не потеряли, но и сумели сохранить национальное достоинство. Начало литературной деятельности Заре Ворбуни было не столь успешным, однако оно определило дальнейшее его развитие.

²² Նույն տեղում։

²³ Նույն տեղում։